

Բաց Նամակ Զարթօնք Օրաթերթին

Մեծայարգ խմբագիր,

«Զարթօնք» Օրաթերթի 7 Մարտ 2005թ. թիվին մեջ լոյս տեսած հաղորդագրութիւնը՝ «Մերոպ Արք. Մուրաֆեան եւ Բոլորտիքեանք Վրդոված», ստիպեց մեզ արձագանգել: Չենք ճանչնար Արք. Մուրաֆեանը, անոր գործունէութիւնը կամ զինք պաշտպանողները, սակայն կ'ուզենք նշել, որ անոր ի նպաստ Մելգոնեանի սկսած դատը, ոչ թէ անձնական հաշիւներով է, այն ալ ինչպէս նախորդի նշեցիք, որպէս Թուրք կառավարութեան գործակալ, այլ Մելգոնեան Կրթ. Նաստատութեան, Քալիֆորնիոյ Սանուց Միութեան խնդրանքով:

Նման ազգանպաստ, խիզախ քայլ պէտք է ըստ արժանւոյն գնահատուի եւ ոչ թէ պախարակուի: Ազգի դրօշը բարձրացնողները, արժանի են միայն յարգանքի: Նաղորդագրութեան մեջ նշած էիք նաեւ, թէ «Զարթօնքը» առիթ կու տայ բոլորին, Մելգոնեանի մասին թեր եւ դէմ արտայայտուելու:

Ներեցէք սակայն, Մելգոնեանի փակման կողմնակիցներու, բոլոր տափակ ու դաւաճանական խօսքերը, միշտ տեղ գտան ձեր թերթի ճակատին, իսկ անոնց հակասող, դպրոցի զոյատեան կողմնակիցներու յողուածները մերժուեցան: Կարծէք թերթի երազը եւ գերագոյն նպատակը, Մելգոնեանը փակուած եւ վաճառուած տեսնելն է: Նշուածը հաստատուելու համար, հարց տանք ձեզի թէ ինչո՞ւ բացարձակ չ'անդրադարձաք Մելգոնեանի փակման դէմ մեր կազմակերպած երեկոյին, «Պահպանել Ազգային Մշակոյթին Ժառանգութիւնները» խորագրին տակ: «Ազդակ», «Արարատ», «Կանչ», «Ծաղիկ» մանրամասն ներկայացուցին եղածը, իսկ դուք լռեցիք: Լռեցիք, նոյնիսկ այն պարագային երբ այնտեղ նշեցինք, ձեր Մելգոնեանի դէմ բռնած ազգավնաս կեցուածքը, եւ անոր օգտին ոչինչ չտպելու փաստը:

Վստահաբար այս նամակը, ինչպէս Մելգոնեանանպաստ նախորդ գրութիւնները կը հասնին զամբիղ, սակայն վստահ եղէք որ ձեր արդէն սակաւաթիւ ընթերցողները՝ որոնցմէ շատեր Մելգոնեանցիներ, ձեզմէ կը սպասեն, Նայանպաստ, խղճամիտ մօտեցում:

Իրաքանչիւր Նայ որ ինքզինք իսկապէս այնպիսին կը զգայ եւ մտահոգ է սփիւռքահայ ապագայով եւ ճակատագիրով, պէտք է պայքարի ու դիմադրէ Մելգոնեանի փակման որոշումին, ի հարկէ եթէ այդ գործառքէն չունի շահաբաժին ... **Ազգայինը՝ անձնականէ առաջ:**

Յարգանքներով՝
ՄԿՆ Լիբանանի Սանուց Միութիւն

